AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-22/05L
Դաս: ՀՊ
«29» մայիսի 2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21[6]-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «ը», «թ» կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի «բ», «ը», «թ» ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2026 թվականի հունիսի 24-ին ժամը 16:00-ին, 0001, Երևան Աբովյան փողոց, 14 շենք հասցեում գտնվող «Գրանդ Հոթել Երևան» հյուրանոցի «The Grand Conservatory» դահլիճում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2026 թվականի մայիսի 29-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահույթի բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:
6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:
7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով՝ համաձայն Հավելված 5-ի:

8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
9. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն Հավելված 6-ի:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՕԱՕ • 02500518

AraratBank	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին	Կոդ: ՈՐԽ0102-22/05Լ Դաս: ՀՊ Ամսաթիվ: «29» մայիսի 2026թ.

Հավելված 2

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Շահույթի բաշխման վերաբերյալ

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը, հաշվի առնելով 2025 թվականի տարեկան ֆինանսական գործունեության արդյունքները, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 31.12.2025թ. դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 11,705,199 հազ. ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից 4,000,000 հազ. ՀՀ դրամ գումարով շահույթն ուղղել շահութաբաժինների վճարմանը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2025թ. տարեկան ֆինանսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի մնացած գումարը թողնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի տրամադրության տակ:

Հավելված 3

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2026 թվականի հունիսի 24-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Հարց 1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության մասին:

Հարց 2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2025 թվականի գործունեության արդյունքները հաստատելու մասին:

Հարց 3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին:

Հարց 4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 31.12.2025թ. դրությամբ տարեկան ֆինանսական հաշվետվություններում արտացոլված 11,705,199 հազ. ՀՀ դրամի չափով տարեկան զուտ շահույթից 4,000,000 հազ. ՀՀ դրամը որպես շահութաբաժիններ վճարելու և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2025թ. տարեկան ֆինանսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի մնացած գումարը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի տրամադրության տակ թողնելու մասին:

Հարց 5. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2026 և 2027 թվականների ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ հաստատելու մասին:

Հարց 6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ (Խորհրդի նախագահ) Գրիգոր Հովհաննիսյանի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրելու մասին:

Հարց 7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ Կարեն Բաբաջանյանի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրելու մասին:

Հարց 8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ Արմեն Հարությունյանի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրելու մասին:

Հարց 9. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ Արա Չալաբյանի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրելու մասին:

Հավելված 4

Ց Ա Ն Կ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2025 թվականի գործունեության արդյունքները:
3. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները:
4. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2025թ. տարեկան ֆինանսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման առաջարկ:
5. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2026 և 2027 թվականների ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնելու համար ներկայացված ընկերության վերաբերյալ տեղեկություններ:
6. Խորհրդի անդամներ Գրիգոր Հովհաննիսյանի, Կարեն Բաբաջանյանի, Արմեն Հարությունյանի, Արա Չալաբյանի վերաբերյալ տեղեկություններ:
7. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկ:

AraratBank	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին	Կոդ: ՈՐԽ0102-22/05Լ Դաս: ՀՊ Ամսաթիվ: «29» մայիսի 2026թ.

Հավելված 5

ԾԱՆՈՒՑՈՒՄ*

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը 2026 թվականի հունիսի 24-ին ժամը 16:00-ին, 0001, Երևան Աբովյան փողոց, 14 շենք հասցեում գտնվող «Գրանդ Հոթել Երևան» հյուրանոցի «The Grand Conservatory» դահլիճում հրավիրում է բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2026 թվականի մայիսի 29-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի պաշտոնական կայքէջում (www.araratbank.am)՝ սկսած 2026 թվականի հունիսի 05-ից մինչև 2026 թվականի հունիսի 24-ը:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
վարչության նախագահ՝ Վախթանգ Աբրահամյան

Հավելված 6

Հաստատված է ---.----.2026թ. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի թիվ --/Լ որոշմամբ

ՔՎԱԹԵՐԹԻԿ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության

բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85	24.06.2026թ.

Օրակարգի հարցերը	քվեարկության տարբերակները					
	կողմ		դեմ		ձեռնպահ	
	կողմ		դեմ		ձեռնպահ	

բաժնետիրոջ բաժնետոմսերի (ձայների) քանակը	բաժնետիրոջ /նրա ներկայացուցչի/ ազգանունը և անունը
_____	
	ստորագրությունը

Ծանոթություն. Հարգելի բաժնետեր, Ձեր ընտրության տարբերակի վանդակում նշագրեք «X»կամ «V», իսկ մյուս վանդակները թողեք դատարկ: Եթե բոլոր վանդակները թողնվեն դատարկ կամ «X» կամ «V» նշանը լրացվի մեկից ավել վանդակներում, ապա քվեարկությունը այս քվեաթերթիկով կհամարվի անվավեր: Հիշեցվում է նաև, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի քվեարկողի կողմից:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-26/Լ
Դաս: ՀՊ
«16» հունիսի 2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ 29.05.2026Թ.-Ի ԹԻՎ 22/05Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2026 թվականի մայիսի 29-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին» թիվ 22/05Լ որոշման մեջ վրիպման արդյունքում բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում չի ներառվել Խորհրդի անդամ Արզիկ Սուվարյանի վերընտրվելու հարցը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2026 թվականի մայիսի 29-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին» թիվ 22/05Լ որոշման
   1) 5-րդ կետով հաստատված հավելված 3-ը լրացնել «Հարց 10»-ով՝ հետևյալ բովանդակությամբ.
   «Հարց 10. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի անդամ Արզիկ Սուվարյանի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ Բանկի Խորհրդի անդամի պաշտոնում վերընտրելու մասին:»,
   2) 6-րդ կետով հաստատված հավելված 4-ի 6-րդ կետը փոփոխել՝ շարադրելով հետևյալ բովանդակությամբ.
   «6. Խորհրդի անդամներ Գրիգոր Հովհաննիսյանի, Կարեն Բաբաջանյանի, Արմեն Հարությունյանի, Արա Չալաբյանի, Արզիկ Սուվարյանի վերաբերյալ տեղեկություններ:»:
2. Սույն որոշման 1-ին կետով բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում կատարված լրացման մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով՝ համաձայն Հավելված 1-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ARARATBANK OAO • 02500518

AraratBank	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ 29.05.2026Թ.-Ի ԹԻՎ 22/05Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ	Կոդ: ՈՐԽ0102-26/Լ Դաս: ՀՊ Ամսաթիվ: «16» հունիսի 2026թ.

Հավելված 1

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում կատարված փոփոխության մասին

Հարգելի բաժնետեր

Ի լրումն 2026 թվականի հունիսի 24-ին ժամը 16:00-ին, 0001, Երևան Աբովյան փողոց, 14 շենք հասցեում գտնվող «Գրանդ Հոթել Երևան» հյուրանոցի «The Grand Conservatory» դահլիճում կայանալիք բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովի հրավերի մասին ծանուցման՝ սույնով տեղեկացնում ենք, որ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում կատարվել է լրացում առ այն, որ Խորհրդի անդամ Արզիկ Սուվարյանի վերընտրվելու հարցը ևս ներառվել է որպես բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի հարց:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի նոր օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք. Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի պաշտոնական կայքէջում (www.araratbank.am)՝ մինչև 2026 թվականի հունիսի 24-ը:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
վարչության նախագահի ժ/պ՝ Կարեն Սարգսյան